ԹԱՏՐՈՆԸ ՈՐՊԵՍ ԲԻԶՆԵՍ ԵՎ ՆՐԱ ՀԵՌԱՆԿԱՐԸ

Ընդունված է, որ արվեստը, մասնավորապես թատերական արվեստը, երբևէ չի կարող շահութաբեր լինել, դա անհնարին է. անհամադրելի են թատրոն և շուկա հասկացությունները: Սակայն երբեմն, և պատմությունը դա ապացուցում է, հնարավոր է այս երևույթների համադրումը: Մեզ հայտնի են բազմաթիվ մասնավոր թատրոններ: Առհասարակ, միշտ չէ, որ թատրոններն եղել են պետության հովանավորության ներքո, նույն Անգլիայում, Ֆրանսիայում, ԱՄՆ-ում և այլուր: Միշտ էլ թատրոնը գիտակցել է, որ գուցե շահույթը չէ նպատակը, սակայն դա չի անտեսվել: Պիտեր Բրուկը նշում է, որ բազմաթիվ երկրներում թատրոնը չունի որոշակի սոցիալական կարգավիճակ, չունի որոշակի պարզ նպատակ. մի թատրոնի համար կարևորը փողն է, մյուսի համար՝ փառքը, երրորդի համար՝ հանդիսատեսի հույզերը, չորրորդի համար՝ քաղաքականությունը, հինգերորդի համար՝ զվարճանքը[1]: Բայց չէ որ բոլոր թատրոններն ունեն տոմսարկղ, իսկ երբեմն էլ տոմսերը բավական թանկ արժեն: Այնուամենայնիվ, «մշակութային օջախների հաջողակ աշխատանքի հիմնական չափանիշը <...> ոչ թե տնտեսական, այլև սոցիալական արդյունքն է: Եկամուտը տվյալ բնագավառում միակ և կարևոր նպատակը չէ»[2]: Տնտեսագիտական տեսանկյունից քննելով մշակույթի ոլորտը՝ պետք չէ մոռանալ, որ մշակույթը նախ և առաջ ունի գաղափարական, գեղագիտական և այլ հասարակական գործառույթներ: Տնտեսությունը միայն հնարավորություն է տալիս և ապահովում է մշակույթի զարգացումը[3]:

Թատերական գործիչները, որոնց հետ զրուցել ենք այս թեմաների շուրջ, հիմնականում համամիտ են այն հարցում, որ թատերական արվեստի նպատակը չի կարող լինել շահույթ ստանալը: Սակայն շատերն այն կարծիքին են, որ թատերական ներկայացումը նույնպես արտադրանք է, որ պետք է վաճառվի, գտնի իր սպառողին: Այն արվեստագետները, որոնք կտրականապես դեմ են թատրոն և բիզնես երևույթների միասնությանը, այնուամենայնիվ, ենթագիտակցորեն խոսում են թատրոնում բիզնեսի օրենքները կիրառելու մասին:

Մենք չենք պնդում, թե թատրոնը բացարձակորեն շահութաբեր հիմնարկություն է: Սակայն ի տարբերություն այլ արվեստների, օրինակ, նկարչության, թատերական արվեստը մեծ ծախսեր է պահանջում՝ «հարուստ»

արվեստ է: Արվեստագիտության դոկտոր, թատերագետ Հենրիկ Հովհաննիսյանը կարծում է, որ այսօր թատերական «հիմնարկները պահվում են սովետական իներցիայով: Պահվում են մեծ դժվարությամբ, արհեստականորեն»[4]: Թատերական գործիչները գիտեն դրա մասին, սակայն չեն խոստովանում, որ ժամանակները փոխվել են և անհրաժեշտ է գտնել զարգացման նոր ուղիներ, ֆինանսավորման այլ աղբյուրներ: Բնական է, որ մշակույթն այս տեսակետից պիտի ունենա պետականորեն սահմանված արտոնյալ կարգավիճակ: Տրամաբանական չէ համեմատել թատրոնը և արդյունաբերական հիմնարկությունը, անգամ ծառայություններ վաճառող կազմակերպությունը: Գուցե թատրոնը ոչ թե արտադրություն է, այլև ծառայությունը: «Թատրոնը սկզբնապես շահութաբեր չէ: Թատրոնը կարող է շահութաբեր լինել միայն, եթե դա անտրեպրիզա է, - ասում է ԵԹԿՊԻ մենեջմենթի դասախոս Արթուր Ղուկասյանը: - Իսկ թատրոնները հիմնականում խաղացանկային են լինում: Անտրեպրիզաները ստեղծվում են խաղացանկային թատրոնների դաշտի վրա»[5]: Ինչ վերաբերում է գովազդի օգտագործմանը, մասնագետները հիմնականում գտնում են, որ այսօր այն անհրաժեշտություն է, որոշ դեպքերում վերապահումով՝ որքանո՞վ է դա արդյունավետ: Չի կարելի թերագնահատել գովազդի նշանակությունը, որքանով որ գովազդը բիզնեսի բաղկացուցիչն է:

Հարցման մասնակիցները գտնում են, որ այսօր թատրոնի տոմսի արժեքը մատչելի է հասարակությանը, և նման խնդիր գոյություն չունի: «Համազգային» թատրոնի գլխավոր ռեժիսոր Հրաչյա Գասպարյանը պատմում է մի փորձարարության մասին, որ արվել է 1997 թվականին: Այն դեպքում, երբ թատրոնի տոմսերն արժեին 300 դրամ, նոր ներկայացման տոմսի արժեքը նշանակվեց 1000 դրամ. հանդիսատեսի թիվը չնվազեց, միայն փոխվեց և ավելի լրջացավ վերաբերմունքը: «Թատրոնի տոմսը պիտի արժենա 10 դոլար, 20 դոլար, որպեսզի պարզ դառնա, որ դա լուրջ արվեստ է, - ասում է Մնջախաղի պետական թատրոնի գեղարվեստական ղեկավար Ժիրայր Դադասյանը: - Այստեղ չպետք է լինի մատչելիության հարց, այստեղ ստրատեգիայի, քաղաքականության խնդիր է»[6]: Գուցե այդպես է, սակայն անհրաժեշտ է հաշվի նստել բազմաթիվ այլ հանգամանքների հետ: Արդյո՞ք մեր պայմաններում չպետք է լինի նաև մատչելիության հարց: Խնդիրն անգամ դա չէ: Պետականորեն մշակութային քաղաքականության բացակայության պայմաններում, թատրոններում ակնհայտ է տոմսերի գների քաղաքականության անորոշությունը: Նման խնդիրների լուծումը կարելի էր վստահել թատերական գործի կազմակերպչին՝ մենեջերին, սակայն մենք չունենք կայացած մենեջերական ինստիտուտ:

Աբրահամ Մոլն իր «Մշակույթի սոցիոդինամիկան» աշխատության մեջ գրում է, որ որոշակի պայմաններում և որոշակի սահմաններում օրինաչափ է խոսել գաղափարի տնտեսական արժեքի կամ նրա ստեղծման ինքնարժեքի մասին: Գաղափարի, մշակութային նյութի կամ արտադրանքի ինքնարժեքը, ըստ Աբրահամ Մոլի, կախված է ստեղծման ժամանակամիջոցից և հեղինակի կողմից ծախսված նյութական միջոցների չափից: Գաղափարի, մշակութային նյութի կամ արտադրանքի արժեքը որոշվում է, մի կողմից, նրա յուրօրինակությամբ, մյուս կողմից՝ գոյություն ունեցող սոցիալական ինստիտուտների միջոցով այն հասկանալու և գնահատելու ունակությամբ[7]:

Հովանավորների և հովանավորության մասին թատերական գործիչներն այն կարծիքին են, որ այսօր վաղ է (գուցե և արդեն շատ ուշ է) խոսել դրա մասին, քանի դեռ չկան համապատասխան օրենքներ և արվեստի անհրաժեշտության գիտակցում:

Թե որքանով է հեռուստատեսությունը փոխել աշխարհը, կարող ենք դատել մեր իրականության մեջ դրա անհրաժեշտությամբ: Դժվար է այսօր պատկերացնել կյանքն առանց հեռուստատեսության: Առավել դժվար է ենթադրել, թե ինչ կլիներ, եթե այն չլիներ: Միգուցե հասարակությունն ավելի առո՞ղջ լիներ կամ մեր կյանքն՝ ավելի անհետաքրքի՞ր: Ինչպիսին էլ լիներ աշխարհն առանց հեռուստատեսության, կտարբերվեր այն աշխարհից, որում ապրում ենք: Կարելի՞ է մրցակիցներ համարել թատրոնը և հեռուստատեսությունը, թատրոնը և կինոն: Հարցման մասնակիցները տարբեր կարծիքներ ունեն դրա մասին: Ակնհայտ է, որ թատրոնն իր յուրահատկությամբ տարբերվում է թե հեռուստատեսությունից, թե կինոարվեստից: Թատրոնի կարևորագույն հատկությունն է բեմում մարդու կենդանի ներկայությունը, հանդիսասրահում հանդիսականի ներկայությունը, բեմի և հանդիսասրահի միջև անմիջական հաղորդակցումը: Սակայն մեկ այլ շերտում՝ հասարակությանը հետաքրքիր, մատչելի լինելու, թատրոնը, նույնիսկ կինոն, այսօր անկասկած զիջում են հեռուստատեսությանը: «Կինոյին ձեռնոց նետելը, - գրում է Հրաչյա Ղափլանյանը, - նշանակում է զրոյի հավասարեցնել թատրոնի բուն իմաստը, նրա բնությունը, <...> կենդանի մարդու թատրոնը»[8]: Վաղուց է խոսվում այն մասին, թե կինոն իր ծնունդով վտանգեց թատրոնի գոյությունը, իսկ հեռուստատեսության հայտնագործումը կասկածի տակ դրեց կինոյի ապագան: Այսուհանդերձ՝ հեռուստատեսությանը զուգահեռ ստեղծվում են թատերական ներկայացումներ, կինոնկարներ, պահպանվել են թատերական հիմնարկները, զարգանում են կինոստուդիաները: «Մենք ասում ենք, թե կինոն սպանեց թատրոնը, նկատի ունենալով այն թատրոնը, որ գոյություն ուներ մինչև կինոյի ծնունդը, -

գրում է Պիտեր Բրուկը, - այսինքն թատրոն՝ թատերական տոմսարկղով, ճեմասրահով, հարմարավետ բազկաթոռներով, ռամպայով, դեկորների փոփոխություններով, անտրակտներով և երաժշտությամբ, կարծես թատրոն բառը միայն այդ է նշանակում և գրեթե ոչինչ ավելի»[9]:

Թատրոնը, կինոն, հեռուստատեսությունը տարբեր երևույթներ են իրենց սկզբունքներով, մոտեցումներով, մեթոդով, արտահայտչամիջոցներով, հասարակությանը մատուցվելու եղանակներով, և արդարացի չէ համեմատել կամ համադրել դրանք: Ֆրիչեն իր «Արվեստի սոցիոլոգիան» աշխատության մեջ գրում է. «...մարդկության հասարակական զարգացման մեջ յուրաքանչյուր էական ժամանակաշրջանի համապատասխանում է արվեստը, որ կատարում է որոշակի սոցիալական ֆունկցիա»[10]:

Այսօր առաջնային և կարևոր է դարձել հեռուստատեսությունը: Այլ խնդիր է, թե ինչ արժեքներ է քարոզում և ինչ ազդեցություն ունի հասարակության վրա: Ժամանակներն են փոխվել, և մարդն այսօր նախընտրում է տանը հեռուստացույց նայել, մանավանդ, որ ընտության մեծ հնարավորություն ունի[11]:

Հարցման մասնակիցները բազմիցս կրկնում են այն միտքը, թե *հայ հասարակությունը թատերասեր է և միշտ մնալու է թատերասեր, մարդը թատրոն գնալու կարիք ունի* և այլն: Ոչ ոք չի հիմնավորում իր այս կարծիքը, իսկ մեր դիտարկումները ապացուցում են հակառակը. հասարակության հետաքրքրությունների շրջանակից այսօր դուրս է թատրոնը: Եթե ժամանակին թատրոն գնալն արարողություն էր /սրա մասին հաճախ է հիշվում/ կամ, ըստ Աբրահամ Մոլի, *սոցիալական վարքագծի ակտ*[12], ապա այսօր հաճախ պարզապես ժամանց է: Ելնելով մեր հարցման մասնակիցների գնահատականներից արդի հայ թատերական արվեստի վերաբերյալ՝ կարող ենք եզրակացնել, որ աննպատակ և անիմաստ ժամանց է թատրոնը: Հետևանքն այն է, որ հասարակությունը նախընտրում է հեռուստաէկրանը:

Անշուշտ, թատրոնը և հեռուստատեսությունը մրցակիցներ լինել չեն կարող: Եթե թատրոնը մրցակցության մեջ է մտել կինոյի, հեռուստատեսության կամ շոու-բիզնեսի հետ, և փորձում է այդ դաշտում գոյատևել, դա կործանարար է նրա համար: Շատ թատերական և մշակույթի գործիչներ չեն գիտակցում, որ տարբեր է թատրոնն իր բնույթով, և նպատակահարմար չէ այն դնել, օրինակ, շոու-բիզնեսի կամ հեռուստատեսության կողքին ու ղեկավարվել այդ սկզբունքներով: Մեր իրականության մեջ նման դեպքերը շատ են: Դա նաև պատճառներից մեկն է, որ այսօր թատրոն երևույթը, անգամ բառը, վարկաբեկված է: Թատերական գործիչները վստահ են, որ նախ անհրաժեշտ է վերականգնել

թատրոն երևույթի վարկանիշը, իսկ դա հնարավոր է միայն պետական նպատակային լուրջ ծրագրի առկայության դեպքում: «Թատրոնի ուժը նրա պահպանողականության մեջ է, - ասում է դերասան, ԵԹԿՊԻ ռեկտոր Սոս Սարգսյանը: - Որքան նա մնա թատրոն, որքան նա հեռու մնա կինոյից, հեռուստատեսությունից, այնքան նա գրավիչ է»[13]: Հակառակ դեպքում, թատրոնը ոչ մի մրցակցության չի դիմանա: «Տիկնիկային թատրոնը միշտ պարտված է, երբ փորձում է աշխատել մուլտիպլիկացիոն կինոնկարի մեթոդներով, - ասում է Հովհաննես Թումանյանի անվան տիկնիկային պետական թատրոնի գեղարվեստական ղեկավար Ռուբեն Բաբայանը: - Այն հնարավորությունները, որ ունի կինոն, դրամատիկ թատրոնը երբեք չի ունենա: Բայց դրամատիկ թատրոնը և տիկնիկային թատրոնն ունեն այն առավելությունները, որոնք երբեք ոչ մուլտիպլիկացիան, ոչ կինոն չեն կարող ունենալ»[14]:

Մրցակցության խնդիր թերևս առաջանում է նյութական միջոցներ հայթայթելու հարցում: Գովազդի տեսակետից հեռուստատեսությունն այսօր դարձել է առք ու վաճառքի իդեալական միջոց, իսկ վերջերս, կարծես, մի երկարատև գովազդային հոլովակ: Բնական է, որ այս տեսակետից ևս թատրոնն ու հեռուստատեսությունը նույն հարթության վրա չեն: Այն ֆինանսական հնարավորությունները, որ ունի հեռուստատեսությունը, երբեմն նաև կինոն /իսկ ամերիկյան կինոն ավելի/, անհնարին են թատրոնում: Ըստ մասնագետների, տրամաբանական չէ նաև խոսել փոխարինելիության մասին: Թատրոնը, կինոն, հեռուստատեսությունը կլինեն և կգործեն միմյանցից անկախ, անկախ նրանից, թե սրանցից յուրաքանչյուրն ինչ կարգավիճակ կունենա և որքանով ընդունված և պահանջված կլինի հասարակության կողմից:

Այսպիսով՝ *թատրոն, կինո, հեռուստատեսություն* երևույթները, գտնվելով տարբեր հարթություններում, առաջնորդվելով առանձնահատուկ սկզբունքներով, յուրահատուկ գեղագիտությամբ, աշխատելով տնտեսական որոշակի պայմաններում, մրցակցության խնդիր չեն կարող ունենալ:

Ինչ վերաբերում է հեռուստաթատրոն երևույթին, ապա, ըստ հարցման մասնակիցների, որպես ինքուրույն ժանր, այն դեռ չի ձևավորվել: Բեմն ու էկրանը տարբեր են, ունեն ավելի շատ հակադրություններ, քան շփման կետեր[15]: Մասնագետները գրեթե համաձայն են, որ հայկական հեռուստաթատրոնը, որպես արվեստ, որակական տեսակետից քննություն չի բռնում, սակայն մեծ է եղել նրա հասարակական նշանակությունը: Ամեն երկուշաբթի հեռուստադիտողը հետաքրքրությամբ սպասում էր, որ պիտի հեռուստաներկայացում դիտի: Այսօր հեռուստատեսությամբ հեռարձակվող բազմաթիվ բազմասիրիանոց կինոնկարները նույն հեռուստաթատրոնն է՝ այլ ձևի մեջ:

Ինչպե՞ս են մեր հարցման մասնակիցները՝ թատերական գործիչները, հայ թատրոնը տեսնում 21-րդ դարում: Միանշանակ չեն սպասելիքները, բայց կարծիքներում ընդհանուրն այն է, որ թատրոնի ապագան կապված է երկրում սոցիալ-տնտեսական, հասարակական-քաղաքական դրության հետ:

Հարցման մասնակիցները միշտ չէ, որ վստահ են, սակայն *հույս* ունեն, որ հայ թատրոնը 21-րդ դարում լինելու է, զարգացում է ապրելու՝ դուրս գալով միջազգային ասպարեզ: Կարևոր խնդիր է պետական հոգածությունը՝ հստակ նպատակային մշակութային քաղաքականության առկայությունը, որը մեզանում բացակայում է:

Ուշագրավ է մեկ դիտարկում, որ նորից փաստում է թատրոնական համակարգի օղակների չհամաձայնեցված աշխատանքի մասին: Հարցման մասնակիցը, որն ի պաշտոնե պարտավոր է հստակ պատկերացնել թատրոնական համակարգի դերը, ընթացքը, հեռանկարը, թեկուզ և տեսականորեն, որպես բնագավառի պետական ղեկավար զբաղվել ոլորտի զարգացման և կանխատեսման աշխատանքներով, հայտնում է. «Ես պայծառատես չեմ: Կանխատեսել կամ կանխորոշել չեմ կարող... 21-րդ դարի 10-20-ական թվականներին ի՞նչ պահանջ կլինի»[16]: Փաստորեն, որպես պետական իշխանության ներկայացուցիչ, նա ընդունում է, խոստովանում, որ թատրոնը չի կարևորվում, որ հարկ էլ չկա վերլուծել և ծրագրել կամ կանխատեսել դրա զարգացումն ու հեռանկարը. կողմնորոշիչը կլինի «պահանջը»: Դրան հակառակ, հարցման մեկ այլ մասնակից, որն այսօր զբաղված է թատրոնի պատմության պահպանման՝ թանգարանային գործով, որը խոստավանում է, որ գործող թատրոնները շատ անգամ անտեսում են այս հաստատությունը, իրատեսորեն վստահ է. «Թատրոնը կվերադառնա իր նորմալ կյանքին, խաղացանկում կունենա ողբերգություններ, դրամաներ, կատակերգություններ: Թատերական արվեստը պետք է բռնի իրեն պատվավոր, պատշաճ տեղը...»[17]:

Եթե թատրոնը չկարողացավ պահպանել, թատերական ավանդույթը, չկարողացավ վերադարձնել թատրոնին նրա համբավը, թատրոն կոչվելու բացառիկ իրավունքը, 21-րդ դարում այն չի կարող լինել, չի կարող պահպանվել: Հարկ է նշել, որ շատերն այս հարցին անվստահ էին պատասխանում: Տպավորությունն այն էր, որ, անշուշտ, նրանք մտածել են դրա մասին, խնդիրը բոլորին է հուզում, սակայն կարծիքներն իրատեսական չեն, այլ ցանկություն, գրեթե երազանք: Հարցման մասնակիցներից ոչ ոք իրականում չի տեսնում հայ թատրոնը 21-րդ դարում: Մինչդեռ, եթե զրուցենք որևէ այլ բնագավառի փորձագետի հետ, կհամոզվենք՝ նա վստահ է իր մասնագիտության և բնագավառի անհրաժեշտության հարցում, հստակ պատկերացնում է զարգա-

ցումն ու իր անելիքը, հիմնավորելով կարծիքը գործնական գիտելիքներով, իրատեսական վերաբերմունքով, ժամանակի իրական պահանջներով:

---

[1] П. Брук, Пустое пространство, пер. с англ., М., 1976, стр. 60.
[2] Ю. У. Фохт—Бабушкин, Искусство и духовный мир человека, М., 1982, стр. 53.
[3] Տես՝ О.Новотный, Я. Фишер, Экономика культуры, М., 1987, стр. 43—44.
[4] Հ. Հովհաննիսյան, թատերագետ, արվեստագիտ.դոկտոր, *հարցազրույցից:*
[5] Ա. Ղուկասյան, ԵԹԿՊԻ դասախոս, *հարցազրույցից:*
[6] Ժ. Դաղասյան, Մնջախաղի պետ. թատրոնի գեղ. ղեկ., ԵԹԿՊԻ դասախոս, *հարցազրույցից:*
[7] А. Моль,Социодинамика культуры, перевод с франц., М., Прогресс", 1973, стр. 86—125.
[8] «Ռեժիսոր, ներկայացում, հանդիսատես», (Հր. Ղափլանյանի հոդվ. ժող.), Եր.,ՀԹԸ, 1982, էջ 33:
[9] П. Брук, նշվ. աշխ., էջ 35.
[10] Վ. Ֆրիչե, Արվեստի սոցիոլոգիան, Երևան, Հայպետհրատ, 1937, էջ 41:
[11] Տես՝ Население Еревана. Этносоцнологоческие исследования, Ереван, изд—во АН АрмССР, 1986, стр. 84—87. Հետազոտողները քննում են նախ հայկական կինոյի, ապա հայկական հեռուստատեսության ծնունդով պայմանավորված հասարակության վերաբերմունքն այս երևույթների նկատմամբ:
[12] А. Моль, նշվ. աշխ., էջ 253.
[13] Ս. Սարգսյան, դերասան, ԵԹԿՊԻ ռեկտոր, *հարցազրույցից:*
[14] Ռ. Բաբայան, Թումանյանի անվ. տիկնիկային պետ. թատրոնի գեղ. ղեկ., *հարցազրույցից:*
[15] Տես՝ Е. Сабашникова, Телетеатр: формы отражения реальности, Театр", #1,1979, стр. 55—64.
[16] Ռ. Աբրահամյան, ՀՀ Մշակույթի, երիտասարդության հարցերի և սպորտի նախարարության արվեստի վարչության պետ, *հարցազրույցից:*
[17] Բ. Հովակիմյան, Չարենցի անվ. Արվեստի և գրականության թանգարանի թատրոնի բաժնի վարիչ, *հարցազրույցից:*